


Շաբաթական ամփոփ ակնարկ

Մակրո | Բաժնետոմսեր | Պարտատոմսեր |
Կրիպտոարժույթներ | Հաշվետվություններ |
Ֆյուչերսներ



Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծությունը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն**: Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում**, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում**:

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:


Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **գուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը**: Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Սա պատմության մեջ ամենագերագնահատված ֆոնդային շուկան է:

US Stock Valuations Hit New All-Time High

— Trailing P/E, Forward P/E, CAPE, P/B, P/S, EV/EBITDA, Q Ratio, Mkt Cap to GDP (Average Percentile, Full History)
— S&P (Log)



Source: Bloomberg


Օգոստոսին թանակարժեք մետաղները արձանագեցին բարձր եկամտաբերություն:




Վերամշակված նավթամթերքի գները կտրուկ աճում են:




Օգոստոսին էներգետիկ և տեխնոլոգիական ոլորտները առաջատարն էին:




Նախորդ շաբաթ S&P500-ը աճեց 0.11%-ով




Նախորդ շաբաթ Nasdaq-ը աճեց 0.35%-ով



Նախորդ շաբաթ Dow Jones-ը նվազեց 0.18%-ով




Նախորդ շաբաթ Russell 2000-ը աճեց 0.09%-ով



Օգոստոսին ԱՄՆ հիմնական բաժնետոմսային ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն: Nasdaq100-ը աճեց մոտ 3.9%, S&P500-ը՝ 2.5%, իսկ Russell 2000-ը՝ ընդամենը 0.5%, ինչը ցույց է տալիս խոշոր տեխնոլոգիական ընկերությունների շուրջ պահպանվող վստահությունը: Ամսվա վերջում աշխարհաքաղաքական և տոկոսադրույքային ռիսկերը որոշակի ճնշում գործադրեցին շուկայի վրա:



Օգոստոսին էներգետիկ և տեխնոլոգիական ոլորտները առաջատարն էին, մինչդեռ արդյունաբերական և անշարժ գույքի ոլորտները գրանցեցին բացասական եկամտաբերություն:



Հիպերթեյլերների վարկային ռիսկի ավարտման օրվա չե

AI-ի հսկայական կապիտալ ծախսերը մեծացնում են պարտքային ֆինանսավորման պահանջարկը: Միաժամանակ կառավարություններն ու AI ընկերությունները մրցակցում են նույն կապիտալի համար՝ բարձրացնելով ֆինանսավորման արժեքը:





AI հատվածներում պատկերը միանշանակ չէր

Տվյալների կենտրոնների բաժնետոմսերը ամիսն ավարտեցին անկմամբ, մինչդեռ ծրագրային ապահովման հատվածը արձանագրեց բարձր եկամտաբերությունը:



Ծրագրային ապահովման ոլորտը կտրուկ աճեց՝ դառնալով ամսվա առաջատար տեխնոլոգիական հատվածներից մեկը:

Կիսահաղորդիչների ոլորտը նույնպես աճ գրանցեց՝ պահպանելով դրական դինամիկան:



Broadcom (AVGO)-ի հասույթը 2026 թվականի երկրորդ եռամսյակում կազմել է ռեկորդային 22.19 մլրդ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 48%-ով: Մեկ բաժնետոմսի դիմաց ճշգրտված շահույթը (EPS) կազմել է 2.44 դոլար: Աճի հիմնական շարժիչը AI կիսահաղորդիչների հատվածն էր, որի հասույթը հասել է 10.8 մլրդ դոլարի՝ տարեկան կտրվածքով աճելով 143%-ով՝ custom AI accelerators-ի և AI networking լուծումների նկատմամբ բարձր պահանջարկի շնորհիվ: Ընկերությունը երրորդ եռամսյակի համար կանխատեսել է շուրջ 29.4 մլրդ դոլարի հասույթ:



Palo Alto Networks (PANW)-ի հասույթը 2026 թվականի երկրորդ եռամսյակում կազմել է 2.59 մլրդ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 15%-ով: Մեկ բաժնետոմսի դիմաց ճշգրտված շահույթը (EPS) կազմել է 1.03 դոլար՝ նախորդ տարվա 0.81 դոլարի դիմաց: Աճի հիմնական շարժիչը Next-Generation Security հարթակների նկատմամբ բարձր պահանջարկն էր: Next-Generation Security ARR-ը հասել է 6.33 մլրդ դոլարի՝ աճելով 33%-ով, իսկ Remaining Performance Obligation-ը՝ 16.0 մլրդ դոլարի՝ աճելով 23%-ով:



Dell Technologies (DELL)-ի հասույթը երկրորդ եռամսյակում կազմել է ռեկորդային 47.0 մլրդ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 58%-ով: Մեկ բաժնետոմսի դիմաց ճշգրտված շահույթը (EPS) կազմել է ռեկորդային 7.04 դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 203%-ով: Աճի հիմնական շարժիչներից մեկը AI ենթակառուցվածքների նկատմամբ ուժեղ պահանջարկն էր, AI-optimized server-ների հասույթը կազմել է 16.4 մլրդ դոլար: Ընկերությունը բարձրացրել է տարեկան կանխատեսումը և ակնկալում է շուրջ 192 մլրդ դոլարի հասույթ և 25.50 դոլար ճշգրտված EPS ամբողջ ֆինանսական տարվա համար:



Snowflake (SNOW)-ի հասույթը երկրորդ եռամսյակում կազմել է 1.55 մլրդ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 35%-ով: Մեկ բաժնետոմսի դիմաց ճշգրտված շահույթը (EPS) կազմել է 0.62 դոլար: Աճի հիմնական շարժիչը cloud data platform-ի և AI լուծումների նկատմամբ բարձր պահանջարկն էր: Ծառայություններից հասույթը հասել է 1.49 մլրդ դոլարի՝ աճելով 37%-ով: Ընկերությունը բարձրացրել է տարեկան կանխատեսումը մինչև 6.07 մլրդ դոլար, իսկ հաջորդ եռամսյակի համար ակնկալում է 1.588-1.593 մլրդ դոլարի հասույթ, ինչը համապատասխանում է տարեկան 37-38% աճի:



Սեպտեմբերյան սպասումները կտրուկ փոխվեցին

Հինգշաբթի օրը Դաշնային պահուստային համակարգի կառավարիչ Քրիստոֆեր Ուոլլերը հայտարարեց, որ գնաճի թուլացման դեպքում կողմ կլինի տոկոսադրույքների անփոփոխ պահպանմանը: Սակայն ուրբաթ օրվա աշխատաշուկայի ուժեղ տվյալները փոխեցին շուկայի տրամաբանությունը, կայուն աշխատաշուկան ԴՊՀ-ին ավելի մեծ հնարավորություն է տալիս կենտրոնանալու գնաճի զսպման վրա: Արդյունքում տոկոսադրույքների սպասումները կրկին կտրուկ վերանայվեցին՝ նախորդ օրվա շրջադարձից ընդամենը 24 ժամ անց:



Ուորշի կոշտ դիրքորոշումը՝ գնաճի դեմ պայքարը շարունակելու մասին, զգալիորեն բարձրացրեց սեպտեմբերին տոկոսադրույքի բարձրացման սպասումները՝ մոտ 36%-ից հասցնելով ավելի քան 60%-ի: Կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերություններն աճեցին: Սակայն ուշագրավ է, որ 30-ամյա պարտատոմսերի եկամտաբերությունը ամիսն ավարտեց ավելի ցածր մակարդակում:

Ուորշի պաշտոնավարման առաջին ամիսներին նրա յուրաքանչյուր ելույթ ուղեկցվել է եկամտաբերությունների աճով:




Դոլարի թուլացման ֆոնին ոսկին օգոստոսին աճեց գրեթե 10%-ով՝ գրանցելով հունվարից ի վեր լավագույն ամսական արդյունքը:

Սակայն Ուորշի ելույթից հետո ոսկու գինը նվազեց ավելի քան 3%-ով՝ իջնելով 200-օրյա սահող միջինից (200DMA) ցածր՝ գրանցելով հունիսի սկզբից ի վեր ամենախոշոր մեկօրյա անկումը:



Օգոստոսին դոլարի թուլացումը հիմնականում պայմանավորված էր ԱՄՆ-ում տոկոսադրույքների նվազման աճող սպասումներով և ԴՊՀ-ի ավելի մեղմ քաղաքականության ակնկալիքներով: Ամսվա մերջում ուժեղ վերականգնումը, սակայն, ցույց տվեց, որ այդ սպասումները արագ փոխվում են՝ կախված տնտեսական տվյալներից:



Արծաթն ամսվա ընթացքում աճեց ավելի քան 22%-ով՝ զգալիորեն գերազանցելով ոսկուն, մինչդեռ պղինձի գինը բարձրացավ մոտ 2%-ով գտնվելով իր ռեկորդային մակարդակներ մոտ:



Օգոստոսին Brent-ը գրանցեց բարձր տատանողականություն

Brent-ը ամիսը սկսեց 90.12 դոլարից, ԱՄՆ-ի բանակցությունների առաջընթացի ֆոնին կարճ ժամանակով նվազեց մինչև 79 դոլարի, ապա բանակցությունների ձախողումից և աշխարհաքաղաքական լարվածության աճից հետո բարձրացավ՝ հասնելով մոտ 94 դոլարի: Չնայած զգալի տատանումներին, նավթը ամիսն ավարտեց համեմատաբար փոքր փոփոխությամբ, մինչդեռ վերամշակված նավթամթերքի գներն ավելի ուժեղ աճ արձանագրեցին:




Օգոստոսին բենզինի և հատկապես դիզելի գները կտրուկ աճեցին՝ չնայած հում նավթի համեմատաբար անփոփոխ դինամիկային: Աշխարհաքաղաքական լարվածությունն ու վերամշակման հզորությունների խափանումները սահմանափակեցին նավթամթերքի առաջարկը՝ ԱՄՆ-ում դիզելի գները հասցնելով ռեկորդային մակարդակների: Դիզելի թանկացումը մեծացրեց երկրորդային գնաճի ռիսկերը՝ բարձրացնելով բեռնափոխադրումների, արտադրության և սննդամթերքի ծախսերը:



Բիտքոնինի գինը հուլիսի վերջի մոտ 64,800 դոլարից բարձրացավ մինչև մոտ 78,000 դոլարի՝ գրանցելով ավելի քան 25% աճ:

Սա Բիտքոնինի լավագույն ամիսն էր 2024 թվականի նոյեմբերից ի վեր: Բիտքոնինի աճը տեղի ունեցավ նույնիսկ ԴՊՀ-ի ավելի կոշտ դիրքորոշման պայմաններում:




Սա, ամենայն հավանականությամբ, լավ չի ավարտվելու

130 տարվա կտրվածքով սա պատմության մեջ ամենագերագնահատված ֆոնդային շուկան է՝ գրեթե բոլոր ցուցանիշներով: Միևնույն ժամանակ, մենք ականատես ենք հիմնական ապրանքների առաջարկի պատմության մեջ ամենամեծ ցնցումներից մեկին:

US Stock Valuations Hit New All-Time High

— Trailing P/E, Forward P/E, CAPE, P/B, P/S, EV/EBITDA, Q Ratio, Mkt Cap to GDP (Average Percentile, Full History)

— S&P (Log)



Source: Bloomberg


Household income needed to afford the financed purchase of a typically valued home

Ամերիկյան երազանքը 79%-ով թանկացել է

ԱՄՆ-ում տուն գնելու համար անհրաժեշտ եկամուտը ընդամենը 6 տարվա ընթացքում աճել է 79%-ով:

Աշխատավարձերը չեն աճել 79%-ով:

Արտադրողականությունը չի աճել 79%-ով: Բայց ամերիկյան երազանքը թանկացել է 79%-ով:



New homeowner income needed = Annual household income required to spend less than 30% of monthly income on the total monthly payment after newly purchasing the typical home with a 20% down payment, according to Zillow

Chart: Lance Lambert/Meghan Malas • Source: Zillow • Created with Datawrapper

ԱՄՆ-ում բնակարանների հասանելի լինելու ճգնաժամի հիմնական պատճառը հիփոթեքային տոկոսադրույքները չեն

Այսօրվա մոտ 6.5%-ը պատմական միջինին մոտ է, 136 տարվա միջինը՝ 6.4% է: Ավելին, այն զգալիորեն ցածր է 1970–90-ականների մոտ 10% մակարդակներից: Իրական խնդիրը բնակարանների գներն են: Բնակարանների իրական գները մոտ 90%-ով բարձր են երկարաժամկետ միջինից՝ աճելով շատ ավելի արագ, քան գնաճն ու եկամուտները:

re:venture
APP

Mortgage Rates at 6.5% are Historically Normal


U.S. Historical Mortgage Rates, 1890–2026



*Mortgage rate data sourced from FRED/Freddie Mac from 1971-2026, 30-Year FHA Mortgage Rate (HUD) 1965-1970, Secondary Market Yields on FHA Mortgages from NBER/FRED from 1949-1965 and the academic paper Capital Formation in Residential Real Estate (1956), covering 1890-1948

Հասանելիությունը կարող է վերականգնվել երկու ճանապարհով՝ գների անկմամբ կամ եկամուտների աճով

Վերջին 70 տարիների ընթացքում ԱՄՆ-ում տների գների և եկամուտների հարաբերակցությունը նման ծայրահեղ մակարդակների հասել է ընդամենը մի քանի անգամ: Այսօր այն մոտ 4.33x է՝ շատ մոտ 2006-ի 4.45x մակարդակին և հետպատերազմյան շրջանի 5.0x-ին: 2006-ից հետո բնակարանների գները նվազեցին՝ հարաբերակցությունը վերադարձնելով 3.5x-ից ցածր մակարդակների: Իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գները գրեթե մեկ տասնամյակ չաճեցին, մինչդեռ եկամուտները շարունակեցին տարեկան 5–10% աճել՝ հարաբերակցությունը հասցնելով 3.0x-ից ցածր մակարդակի: Հարցն այն է՝ այս անգամ ո՞ր ճանապարհը կընտրի շուկան:

re:venture
APP

Nvidia-ի աճը շուկայի պատմության բացառիկ էջ է

Nvidia-ի շուկայական կապիտալիզացիան արդեն հասել է 5.3 տրիլիոն դոլարի՝ կազմելով S&P 500-ի ընդհանուր շուկայական կապիտալիզացիայի շուրջ 8%-ը:


Այս մակարդակում Nvidia-ն արդեն ավելի արժեքավոր է, քան S&P 500-ի 11 ոլորտներից 5-ը՝ առանձին-առանձին:

Ավելին՝ ընկերության շուկայական արժեքը գերազանցում է էներգետիկայի, կոմունալ ծառա-յությունների, անշարժ գույքի և նյութերի ոլորտների ընդհանուր

կապիտալիզացիան:

5.3 տրիլիոն դոլարի ի համարժեք է ԱՄՆ տարեկան ՀՆԱ-ի մոտ 16.3%-ին:

Market Cap Weight in S&P 500



Չինաստանի կողմից ռուսական նավթի ներմուծումը օգոստոսին կրկին աճել է՝ հասնելով օրական մոտ 1.6 մլն բարելի՝ վերականգնվելով մայիսյան 1.05 մլն բարել մակարդակից:


Իրանական նավթի ներմուծումը Չինաստան նախապատերազմյան մակարդակից նվազել է 48%-ով:

Հորմուզի նեղոցով մատակարարումների խափանումների պայմաններում ռուսական նավթը լրացնում է առաջացած բացը:

China Buys Russian Oil as Middle East Supplies Dwindle

China bids up key Russian crude as Iranian supply tightens, Hormuz constrained

■ Russian oil flows to China




Note: Volumes subject to change as shipment is observed

Source: Kpler

Bloomberg

Չինաստանը պատրաստվում է առևտրային ցնցումների

Չինաստանը կրճատում է ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի դիրքերը և ակտիվորեն ավելացնում ոսկու պահեստավորումը: Այն աշխարհի խոշորագույն ոսկի արտադրողն ու սպառողն է, իսկ 2026-ի առաջին կիսամյակում ոսկու ներմուծումն աճել է մոտ 50%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: ԱՄՆ-ի պետական պարտքի բեռը հասել է վտանգավոր մակարդակների, և Պեկինը դա հաշվի է առնում:



Այս շաբաթ 56, ընկերություններ հրապարակելու են իրենց ֆինանսական հաշվետվությունները 2026 թվականի երկրորդ եռամսյակի համար: Շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են Oracle Corporation (ORCL), Adobe (ADBE), The Kroger (KR), Copart (CPRT), Chewy (CHWY), GameStop (GME) և բազմաթիվ այլ ընկերությունների հաշվետվությունները:

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	↓ Market Cap	P/E	Price
1	 ORCL	Oracle Corp	Technology	Software - Infrastructure	USA	404.30B	24.10	140.36
2	 ADBE	Adobe Inc	Technology	Software - Application	USA	112.83B	16.23	283.85
3	 KR	Kroger Co	Consumer Defensive	Grocery Stores	USA	35.60B	33.99	58.12
4	 CPRT	Copart Inc	Industrials	Specialty Business Services	USA	30.01B	20.19	32.41
5	 CASY	Casey's General Stores Inc	Consumer Cyclical	Specialty Retail	USA	28.38B	40.01	766.83
6	 SUNB	Sunbelt Rentals Holdings Inc	Industrials	Rental & Leasing Services	USA	27.75B	-	67.69
7	 COO	Cooper Companies Inc	Healthcare	Medical Instruments & Supplies	USA	13.55B	58.70	69.50
8	 SAIL	Sailpoint Inc	Technology	Software - Infrastructure	USA	10.94B	-	19.28
9	 CHWY	Chewy Inc	Consumer Cyclical	Internet Retail	USA	9.64B	39.07	23.54
10	 TTAN	ServiceTitan Inc	Technology	Software - Application	USA	9.06B	-	95.00
11	 GME	Gamestop Corp	Consumer Cyclical	Specialty Retail	USA	8.50B	14.44	18.95
12	 CNM	Core & Main Inc	Industrials	Industrial Distribution	USA	8.22B	18.03	42.50
13	 AVAV	AeroVironment Inc	Industrials	Aerospace & Defense	USA	7.37B	-	145.00
14	 NAVN	Navan Inc	Technology	Software - Application	USA	7.02B	-	27.59
15	 DSGX	Descartes Systems Group Inc	Technology	Software - Application	Canada	6.84B	39.72	79.86
16	 M	Macy's Inc	Consumer Cyclical	Department Stores	USA	5.84B	9.14	22.22
17	 BRZE	Braze Inc	Technology	Software - Application	USA	3.67B	-	32.61
18	 SIG	Signet Jewelers Ltd	Consumer Cyclical	Luxury Goods	Bermuda	3.20B	11.39	81.26
19	 AEO	American Eagle Outfitters Inc	Consumer Cyclical	Apparel Retail	USA	2.78B	10.25	16.58
20	 ABM	ABM Industries Inc	Industrials	Specialty Business Services	USA	2.75B	18.06	46.87

Monday, Sep. 7

No events scheduled

Tuesday, Sep. 8

6:00 AM NFIB Index of Small Business Optimism Aug. - - 99.8

3:00 PM Consumer Credit Jul. - - 14.2B

Wednesday, Sep. 9

No events scheduled

Thursday, Sep. 10

8:30 AM Weekly Jobless Claims Sept. 5 - - -

8:30 AM PPI Aug. - - 0%

8:30 AM Ex-Food & Energy PPI, M/M% Aug. - - 0.2%

8:30 AM PPI,Y/Y% Aug. - - 4.7%

10:00 AM Monthly Wholesale Trade Jul. - - 0.2%

10:00 AM Existing Home Sales Aug. - - 4.1M

Friday, Sep. 11

8:30 AM CPI Aug. - - 0.1%

8:30 AM Core CPI, M/M% Aug. - - 0.2%

8:30 AM CPI, Y/Y% Aug. - - 3.4%

8:30 AM CPI Core, Y/Y% Aug. - - 2.5%

10:00 AM U. Michigan Prelim Consumer Survey Sep - - 51

2:00 PM Monthly Treasury Balance Aug. - - -432B

Powered by Onclusive and Dow Jones.

